Luys Lույս®

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՆԴԵՔՍԸ

Հաշվետվություն Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից հրապարակված «Ճանապարհորդության և զբոսաշրջության զարգացման ինդեքս-2024» զեկույցի հիման վրա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 1

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 4

3. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ 8

4. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 11

5. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԴՐՈՒՄՆԵՐ 15

6. ԱՄՓՈՓՈՒՄ 17

ՀԱՎԵԼՎԱԾ 20

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՄԷ	Արաբական Միացյալ Էմիրություններ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԽՍՀՄ	Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՏՀ	Համաշխարհային տնտեսական համաժողով
ՃԶՄԻ	Ճանապարհորդության և զբոսաշրջության մրցունակության ինդեքս
ՃԶԶԻ	Ճանապարհորդության և զբոսաշրջության զարգացման ինդեքս
ՃԶ	Ճանապարհորդություն և զբոսաշրջություն
ՃԶԶԻ-2024	«Ճանապարհորդության և զբոսաշրջության զարգացման ինդեքս - 2024» զեկույց
ՄԱԿԶՀԿ	Միավորված ազգերի կազմակերպության Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպություն
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՏՀՏ	Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաներ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտը հանդիսանում է ժամանակակից տնտեսության անկյունաքարերից մեկը: Այն կարևոր դերակատարում ունի տնտեսական զարգացման, աշխատատեղերի ստեղծման և մշակութային փոխանակման գործում, հանդիսանում է տնտեսական աճի կարևորագույն խթաններից մեկը, նպաստում տարբեր ոլորտներում (ներառյալ՝ կացության, տրանսպորտի և զբոսաշրջային գործունեության) աշխատատեղերի ավելացմանը և ենթակառուցվածքների զարգացմանը: Ավելին, զբոսաշրջությունը խթանում է միջազգային ներդրումները և տնտեսության դիվերսիֆիկացիան: Տնտեսականից բացի, զբոսաշրջությունն ունի նաև էական սոցիալական և մշակութային ազդեցություն: Մասնավորապես, այն նպաստում է սոցիալական համախմբվածությանը և երկրների միջև միջմշակութային կապերի ամրապնդմանը:

Հաշվի առնելով ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի կարևորությունը՝ որպես կանոն, բոլոր երկրներում դրա բարեփոխումների և հետագա զարգացմանն ուղղված քայլերի իրականացման նպատակով պարբերաբար իրականացվում են տարբեր գիտագործնական ուսումնասիրություններ, որոնցով վերհանվում են ոլորտի զարգացման հիմնական խնդիրները, նախանշվում դրանց հաղթահարման ուղիները: Մասնավորապես, լուրջ ուշադրություն է դարձվում ոլորտի մրցունակության աստիճանի չափման և գնահատման հարցերին: Այդ իսկ պատճառով, բազմաթիվ երկրներում այդ խնդիրներով զբաղվում են տարբեր առանձնացված մասնագիտական կառույցներ, ինչպես նաև գիտական և ակադեմիական հաստատություններ: Այնուամենայնիվ, քանի որ վերջին տասնամյակների գլոբալ զարգացումների արդյունքում զբոսաշրջության ոլորտին վերաբերող խնդիրները և մարտահրավերները դուրս են եկել առանձին երկրների ազգային սահմաններից և ստացել համաշխարհային բնույթ, դրանց մի մասի վերհանման, գնահատման և լուծման ուղիների առաջարկման համար միայն առանձին երկրի սահմաններում կատարված հետազոտությունները բավարար չեն: Ուստի, նշված հարցերի, ինչպես նաև միջերկրային և միջժամանակային համեմատություններ կատարելու համար առանձնակի կարևորություն ունեն միջազգային տարբեր հեղինակավոր կազմակերպությունների վերլուծությունները, որոնց շարքում առավել հատկանշական է Համաշխարհային տնտեսական համաժողովի (ՀՏՀ) կողմից հրապարակվող զեկույցը:

ՀՏՀ-ն 2007 թվականից երկու տարին մեկ անգամ հրապարակում էր զեկույց Ճանապարհորդության և զբոսաշրջության մրցունակության ինդեքսի (ՃԶՄԻ) վերաբերյալ: 2022 թվականից դրա փոխարեն, երկամյա պարբերականությամբ,

հրապարակվում է նոր զեկույց՝ Ճանապարհորդության և զբոսաշրջության զարգացման ինդեքսի (ՃՋՋԻ) վերաբերյալ:

Զեկույցն անդրադառնում է տարբեր երկրներում և տարածաշրջաններում ճանապարհորդության և զբոսաշրջության (ՃՋ) ոլորտում նախորդ հրապարակումից ի վեր տեղի ունեցած զարգացումներին՝ նշելով արձանագրած առաջընթացը կամ հետընթացը:

Օրերս հրապարակվել է ՀՏՀ-ի «Ճանապարհորդության և զբոսաշրջության զարգացման ինդեքս - 2024» (ՃՋՋԻ-2024) զեկույցը (այսուհետ՝ Զեկույց): Այն ՃՋՋԻ-ի վերաբերյալ թվով երկրորդ զեկույցն է և պատրաստվել է Անգլիայի Սուրիի համալսարանի հետ համագործակցությամբ:

Զեկույցում ներառվել է 119 երկիր:

Այս տարվա զեկույցը հատկապես կարևորվում է նրանով, որ այն ընդգրկում է COVID-19-ի համավարակի հետևանքով արձանագրված աննախադեպ հետընթացից հետո վերականգնման և ադապտացիայի շրջանը: Զեկույցում նշվում է, որ համավարակը ոչ միայն գրեթե դադարեցրեց ճանապարհորդությունն ու զբոսաշրջությունը, այլև բոլոր մակարդակներում վերափոխեց ծախսումների կառուցվածքը՝ ինչպես արագացնելով նախկինում գոյություն ունեցողները (օրինակ՝ թվայնացումը), այնպես էլ ներմուծելով նորերը (օրինակ՝ առողջապահական և ապահովության համակարգերի վրա աննախադեպ մեծ ուշադրությունը):

Զեկույցում 2024-ի ցուցանիշները համեմատվում են 2019-ի հետ (թերևս այն պատճառով, որպեսզի ներկայիս իրավիճակը համեմատվի նախահամավարակային ժամանակաշրջանի հետ, քանի որ ակնկալվում է, որ համաշխարհային զբոսաշրջությունը 2024 թվականին կհասնի նախահամավարակային մակարդակին):

Զեկույցում աշխարհի երկրները խմբավորված են 5 տարածաշրջանային խմբերում՝ «Ամերիկա», «Ասիա և խաղաղօվկիանոսյան երկրներ», «Եվրոպա և Եվրասիա» (Հայաստանն ընդգրկված է այս խմբում), «Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա» և «Ենթասահարական Աֆրիկա»:

Ըստ Զեկույցի՝ 2024թ. համաշխարհային միջին ՃՋՋԻ-ն 3.96 միավոր է (7 միավորանոց համակարգում):

Ի դեպ, քանի որ կատարված մեթոդաբանական փոփոխությունները Զեկույցի այս հրատարակությունը դարձրել են անհամատեղելի նախորդ զեկույցի հետ, միջժամանակային համադրելիությունն ապահովելու նպատակով 2024-ի

զեկույցում զետեղվել են նաև 2019 և 2021 թվականների համար նոր մեթոդաբանությամբ վերահաշվարկված տվյալները:

Հայաստանի 2024 թվականի ՃԶԶԻ-ն կազմել է 3.73 միավոր, որը 2019-ի 3.82[1] և 2021-ի 3.83 միավոր ցուցանիշից պակաս է՝ համապատասխանաբար 2.4 և 2.6 տոկոսով:

«Լույս» հիմնադրամը մշտապես հրապարակում է վերլուծություններ միջազգային հեղինակավոր կառույցների ինդեքսների, այդ թվում՝ ՀՀ ճանապարհորդության և զբոսաշրջության մրցունակության ինդեքսի[2] վերաբերյալ: «Ճանապարհորդության և զբոսաշրջության զարգացման ինդեքս - 2024» զեկույցին վերաբերող սույն վերլուծությունում կանդրադառնանք ՀՀ գնահատականներին ու տարածաշրջանային համադրումներին, ինչպես նաև ՀՏՀ-ի կողմից ներկայացված առավել ուշագրավ փաստերին:

Վերլուծության սկզբում ներկայացվում է ՃԶԶԻ-ն և դրա հաշվարկման մեթոդաբանությունը: Այնուհետև անդրադարձ է կատարվում Զեկույցի ընդհանուր գնահատականներին՝ համաշխարհային կտրվածքով: Հաջորդիվ, Զեկույցի շրջանակներում, վերլուծվում է Հայաստանին վերաբերող տեղեկատվությունը: Վերլուծության առանձին բաժին նվիրված է տարածաշրջանային համադրումներին ու ընդհանուր համապատկերում Հայաստանի դիրքին: Վերջում շարադրված է վերլուծության հակիրճ ամփոփումը:

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՃԶԶԻ-ն ագրեգացված ցուցանիշ է, հանդիսանում է հինգ ենթաինդեքսներում խմբավորված 17 հիմնասյուների գնահատականների միջին թվաբանականը և արժեքներ է ընդունում [1,7] միջակայքում, որտեղ 1-ը համապատասխանում է ՃԶ ոլորտի զարգացման ամենացածր, իսկ 7-ը՝ ամենաբարձր մակարդակին: Հիմնասյուներից յուրաքանչյուրը ներառում է ընդհանուր թվով 102 ցուցիչներ:

ՃԶԶԻ-ի ենթաինդեքսները հետևյալներն են.

1. **«Նպաստող միջավայր (Enabling environment)»:** Այս ենթաինդեքսը ներառում է 5 հիմնասյուներում խմբավորված 38 ցուցիչներ:

[1] Ինչպես նշվել է, 2019 և 2021 թվականներին դեռևս ՃԶԶԻ զեկույց չէր հրապարակվում, սակայն այդ տարիների համար ևս փաստացի տվյալներով և 2024թ. մեթոդաբանությամբ հաշվարկվել են ՃԶԶԻ-ն և դրա բաղադրիչները:
[2] «ՃԶՄԻ-2019» զեկույցի հիման վրա հրապարակված հաշվետվություն՝ https://www.luys.am/img/artpic/small/....pdf (այցելվել է 01.06.2024թ.):

2. **«ՃԶ ոլորտի քաղաքականություն և նպաստող պայմաններ»** ենթաինդեքսի ցուցիչները թվով 12-ն են, որոնք խմբավորված են 3 հիմնապայուններում:
3. **«Ենթակառուցվածք և ծառայություններ»** ենթաինդեքսն ունի 3 հիմնապայուններում ներառված 14 ցուցիչներ:
4. **«ՃԶ ոլորտի ռեսուրսներ»** ենթաինդեքսը նույնպես բաղկացած է 3 հիմնապայուններից, որոնք ընդգրկում են 14 ցուցիչներ:
5. **«ՃԶ ոլորտի կայունություն»** ենթաինդեքսում ընդգրկված են 3 հիմնապայուններում խմբավորված 24 ցուցիչներ:

Գծապատկեր 1. ՃԶԶԻ-ի կառուցման գործընթացը[3]



ՃԶԶԻ-ում ներառվող ցուցիչները պետք է բավարարեն հետևյալ ***հինգ հիմնական չափանիշներին.***

1. Համապատասխանություն: Ցուցիչը պետք է առավելագույնս համապատասխանի տվյալ հիմնապայունի բովանդակությանը:

2. Երկրների նվազագույն ընդունելի ծածկույթի ապահովում: Ընտրվում են միայն այնպիսի ցուցանիշներ, որոնք հասանելի են դիտարկվող երկրների մեծամասնության համար (որպես կանոն՝ առնվազն 100 երկիր):

3. Համադրելիություն: Ցուցիչը պետք է համադրելի լինի ինչպես միջերկրային, այնպես էլ միջժամանակային առումներով:

[3] Աղբյուրը՝ ՀՏՀ պաշտոնական կայք՝ https://www.weforum.org/publications/travel-tourism-development-index-2024/appendix-a-e8e28f48c4/ (այցելվել է 01.06.2024թ.):

4. Պարբերական թարմացում: Ցուցիչը տեսանելի ժամանակային հորիզոնում պետք է լինի «պարբերաբար թարմացվող»:

5. Աղբյուրի հուսալիություն և օբյեկտիվություն: Պետք է օգտագործվեն միայն հեղինակավոր և օբյեկտիվ աղբյուրներից ստացվող տվյալներ: Որպես կանոն, բացի ՀՏՀ-ից տվյալներից, այդպիսի աղբյուրներ են հանդիսանում միայն միջազգային տարբեր հեղինակավոր կառույցները, ինչպիսիք են ՀԲ-ն և Միավորված ազգերի կազմակերպության Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպությունը (ՄԱԿԶՀԿ): Միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում օգտագործվում են նաև տարբեր երկրների պետական հաստատությունների հրապարակային տվյալները, սակայն առանց այդ մասին նրանց տեղյակ պահելու:

ՃԶԶԻ-ն հաշվարկվում է որպես վերոհիշյալ 17 հիմնասյուների միջին թվաբանական: Ի դեպ, թեև հաշվարկվում են նաև հինգ ենթաինդեքսների արժեքները, այդուհանդերձ, դրանք ուղղակիորեն ՃԶԶԻ-ի հաշվարկում չեն օգտագործվում:

Հիմնասյուներից յուրաքանչյուրը հաշվարկվում է որպես դրանում ներառված ցուցիչների միջին թվաբանական: Նշենք, որ հիմնասյուներից երկուսն իրենց հերթին բաղկացած են ենթասյուներից, և այդ դեպքում հիմնասյունի գնահատականը հաշվարկվում է որպես դրա բաղկացուցիչ ենթասյուների գնահատականների միջին թվաբանական:

Հատկանշական է, որ Զեկույցում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ոչ թե ինդեքսի ընթացիկ արժեքին, այլ նախորդ ժամանակահատվածի համեմատ դրա դինամիկային (տոկոսային աճին կամ նվազմանը):

Աղյուսակ 1. ՃԶԶԻ-ի ենթաինդեքսները, հիմնասյուները և դրանց մեկնաբանությունները

Ենթաինդեքս	Հիմնասյուն	Մեկնաբանություն
Նպաստող միջավայր	Գործարար միջավայր	• օրենքի գերակայություն • գործարար միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականություն • գործարար դաշտի «քաղաքական կայունություն» • երկրի վարկային վարկանիշ
	Ապահովություն և անվտանգություն	ընդհանուր հանցագործությունների, բռնության և ահաբեկչության մակարդակ
	Առողջություն և հիգիենա	• «բուժաշխատողների խտություն», • խմելու ջրի հասանելիություն, • հիվանդանոցային մահճակալների «խտություն» • սանիտարական նորմերի ապահովման մակարդակ
	Մարդկային ռեսուրսներ և աշխատաշուկա	• միջնակարգ կրթությամբ աշխատուժի կշիռ • բարձրագույն կրթությամբ աշխատուժի կշիռ • միջնակարգ կրթության որակ

		• շարունակական կրթության որակ • աշխատաշուկայի ճկունություն, կադրերի հասանելիություն • աշխատանքային ճկուն պայմանների առկայություն • աշխատուժի ներգրավվածություն • աշխատանքային հավասար հնարավորությունների առկայություն • աշխատողների իրավունքների պաշտպանվածություն • աշխատուժում կանանց ներգրավվածություն • սոցիալական պաշտպանվածություն • սոցիալական պաշտպանությանն ուղղվող պետական ծախսեր
	ՏՀՏ կիրառելիություն	ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցածություն, մատուցվող առցանց ծառայությունների որակ
ՃՋ ոլորտի քաղաքա-կանություն և նպաստող պայմաններ	ՃՋ ոլորտի առաջնայնություն	երկրի կառավարության կողմից ՃՋ ոլորտի գերակայությանն ու մրցունակության բարձրացմանն ուղղված գործունեություն
	ՃՋ ոլորտի բացություն	• ՃՋ ոլորտի միջազգայնացում • շուկաների բացություն • զբոսաշրջիկների համար երկիր մուտքի պարզություն
	Գնային մրցունակություն	• ավիատոմսի հարկերի, օդանավակայանների վճարների, հյուրանոցների հարաբերական արժեքներ • գնողունակության համարժեքություն (PPP) • դիզվառելիքի գներ • կարճաժամկետ վարձակալության գներ
Ենթակա-ռուցվածք և ծառայու-թյուններ	Օդային տրանսպորտի ենթակառուցվածք	երկիր մուտք գործելու դյուրինություն, երկրի ներսում օդային ճանապարհով տեղաշարժվելու միջոցների առկայություն
	Վերգետնյա և ծովային տրանսպորտի ենթակառուցվածք	ճանապարհային, երկաթուղային և նավահանգստային համակարգերի զարգացածության, հարմարավետության և արդյունավետության աստիճան
	Զբոսաշրջային ծառայություններ և ենթակառուցվածք	որակյալ կացարանների, զվարճանքի օբյեկտների, հանգստավայրերի առկայություն, զբոսաշրջիկներին անհրաժեշտ ծառայությունների հասանելիություն
ՃՋ ոլորտի ռեսուրսներ	Բնական ռեսուրսներ	• երկրում առկա ՅՈՒՆԵՍԿՕ-ի բնական ժառանգության վայրերի քանակ • կենդանական և բուսական բազմազանություն, արգելոցների թիվ • էլեկտրոնային որոնման հարթակներում երկրի բնական ռեսուրսների մասին տեղեկատվության քանակական և որակական բնութագիր • ցամաքային և ջրային «էկոտարածաշրջանների» (համաձայն «Վայրի բնության հիմնադրամի»՝ WWF-ի սահմանման) թիվ
	Մշակութային ռեսուրսներ	• երկրում առկա՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային ժառանգության վայրերի քանակ • բանավոր և ոչ նյութական ժառանգության օբյեկտների թիվ

		• մեծ մարզադաշտերի առկայություն, էլեկտրոնային որոնման հարթակներում երկրի մշակութային ռեսուրսների մասին տեղեկատվության քանակական և որակական բնութագիր
	Ոչ ժամանցային ռեսուրսներ	• երկրում Ֆորբսի համաշխարհային խոշորագույն 2000 ընկերությունների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվ • Վեբոմետրիքսի «Աշխարհի լավագույն 10000 համալսարանները» վարկանիշային աղյուսակում ընդգրկված ուսումնական հաստատությունների թիվ • էլեկտրոնային որոնման հարթակներում երկրի ոչ ժամանցային ռեսուրսների մասին տեղեկատվության քանակական և որակական բնութագիր
ՃԶ ոլորտի կայունություն	Միջավայրային կայունություն	• էներգետիկ կայունություն, • աղտոտվածություն և միջավայրային պայմաններ, • բնության պաշտպանություն
	ՃԶ ոլորտի սոցիալ տնտեսական ազդեցություն	• ՀՆԱ-ի վրա ՃԶ ոլորտի ազդեցության բազմարկիչ, • զբաղվածության վրա ՃԶ ոլորտի ազդեցության բազմարկիչ, • ՃԶ ոլորտի բարձր վարձատրվող աշխատանքների տեսակարար կշիռ • ՃԶ ոլորտի գենդերային հավասարություն
	ՃԶ ոլորտի պահանջարկի կայունություն	• այցելության միջին տևողություն • միջազգային զբոսաշրջության սեզոնայնություն • մշակութային գրավչության մակարդակ • բնության գրավչության մակարդակ • զբոսաշրջության «երկրով մեկ ցրվածության» մակարդակ

ՃԶԶԻ-2024-ում նախորդ՝ 2022-ի զեկույցի համեմատ կատարվել են մեթոդաբանական որոշ փոփոխություններ: Մասնավորապես, ցուցիչների թիվը նախկին 112-ից նվազել է մինչև 102: Ընդ որում, նշված 112-ից 76-ն ընդգրկվել են նաև նոր մեթոդաբանությունում, 36-ը հանվել են և ավելացվել 26 նորերը: Զեկույցում նշվում է, որ մեթոդաբանությունը վերանայվել է գլոբալ փոփոխություններին արձագանքելու նպատակով: Մեթոդաբանական փոփոխությունները, ի թիվս այլ խնդիրների, մասնավորապես վերաբերում են նաև ՃԶ-ի բնապահպանական և սոցիալական ազդեցությանը:

3. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ըստ Զեկույցի ՃԶ ոլորտը կազմում է համաշխարհային ՀՆԱ-ի և զբաղվածության մոտավորապես 1/10-ը, չափազանց կարևոր է, որ ոլորտի որոշում կայացնողներն առաջնորդվեն ռազմավարական և համապարփակ մոտեցումներով: Այս համատեքստում կարևորվում է ՃԶԶԻ-ի նշանակությունը, քանի որ այն, մասնավորապես, նպատակ ունի աջակցելու քաղաքականություն մշակողներին ու իրականացնողներին, տարբեր կազմակերպությունների, ՃԶ ոլորտի ընկերություններին և այլ շահագրգիռ

անձանց՝ նրանց տրամադրելով տեղեկատվություն ՃՋ ոլորտի ուժեղ և թույլ կողմերի, ինչպես նաև հետագա բարելավման ուղղությունների մասին:

Ինչպես արդեն նշվեց, ակնկալվում է, որ համաշխարհային կտրվածքով ՃՋ ոլորտը նախահամավարակային մակարդակին կհասնի մինչև 2024թ. ավարտը: Այնուամենայնիվ, պարզ է, որ վերականգնումը տարբերվելու է ըստ տարածաշրջանի և երկրի: Համավարակային ցնցումից վերականգնմանը զուգահեռ, ՃՋ ոլորտը ստիպված է շարունակել դիմակայել նաև այլ արտաքին մարտահրավերների՝ աճող մակրոտնտեսական, աշխարհաքաղաքական և բնապահպանական ռիսկերից մինչև նոր տեխնոլոգիաների (ինչպիսիք են «մեծ տվյալները» և արհեստական բանականությունը) կիրառման հետ կապված դժվարությունները:

2024թ. համաշխարհային միջին ՃՋՀ-ին 3.96 միավոր է (7 միավորանոց համակարգում):

Նշվում է, որ, չնայած դիտարկված 119 երկրներից 71-ի ՃՋՀ-ն 2019-2024թթ. ժամանակահատվածում աճել է, այդ երկրների ընդհանուր միջինացված ՃՋՀ-ն ընդամենը 0.7%-ով է գերազանցում նախահամաճարակային մակարդակը:

Ըստ հիմնասյուների ուսումնասիրությունը վկայում է համաշխարհային ՃՋ ոլորտի պահանջարկի վերականգնման մասին, մասնավորապես՝ համաշխարհային օդային երթուղիների թողունակության ավելացման ու աշխարհագրության ընդլայնման, «բացության» աստիճանի բարձրացման և զբոսաշրջություն «առաջացնող» բնական ու մշակութային ռեսուրսների պահանջարկի և դրանցում ներդրումների ավելացման մասին: Այնուամենայնիվ, չնայած արձանագրված աճին, «ոչ ժամանցային» զբոսաշրջության նկատմամբ պահանջարկը դեռևս զգալիորեն հետ է մնում «ժամանցային» զբոսաշրջության նկատմամբ պահանջարկից, աշխատուժի պակասը շարունակում է զգացնել տալ, իսկ օդային երթուղիների թողունակությունն ու աշխարհագրությունը, ինչպես նաև ոլորտում կապիտալ ներդրումները ցածր են դրանց նկատմամբ պահանջարկից: Առաջարկի և պահանջարկի միջև այս ճեղքվածքը, որը զուգակցվում է համընդհանուր գնաճային ճնշման հետ, նվազեցրել է շատ երկրների գնային մրցունակությունը և հանգեցրել սպասարկման խաթարումների:

ՃՋ ոլորտի զարգացման մակարդակները զգալիորեն տարբերվում են՝ կախված տարածաշրջանից: 2024 թվականին ՃՋՀ-ով առաջատարը «Եվրոպա և Եվրասիա» տարածաշրջանն է՝ 4.26 ցուցանիշով: Երկրորդը «Ասիա և խաղաղօվկիանոսյան երկրներ» տարածաշրջանն է (4.11 միավոր), երրորդ և չորրորդ տեղերը կիսում են «Ամերիկա» և «Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա» տարածաշրջանները (3.86 միավոր): «Ենթասահարական Աֆրիկայի»

ՃԶԶԻ-ն ամենափոքրն է՝ 3.33 միավոր: Վերջինս, սակայն, առաջին տեղում է 2019-2024 թվականների ընթացքում ՃԶԶԻ-ի տոկոսային փոփոխության առումով՝ 2.1% աճ: Դրան 0.9% աճով հաջորդում է «Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա» տարածաշրջանը: Երրորդ և չորրորդ հորիզոնականները՝ 0.5% աճի ցուցանիշով կիսում են «Ամերիկա» և «Ասիա և խաղաղօվկիանոսյան երկրներ» տարածաշրջանները: ՃԶԶԻ-ի դինամիկայի (0.4% աճ) առումով հետնապահը դրա բացարձակ արժեքով առաջատար «Եվրոպա և Եվրասիան» է:

ՃԶ ոլորտի զարգացման առավել բարենպաստ պայմաններ տարածաշրջաններից շարունակում են ունենալ «Եվրոպա և Եվրասիա» և «Ասիա և խաղաղօվկիանոսյան երկրներ» տարածաշրջանները, իսկ երկրների խմբերից՝ բարձր եկամտով երկրները: 2024-ին ՃԶԶԻ-ով առաջատար 30 երկրներից 26-ը բարձր եկամտով երկրների խմբից են: Նշված 30-ից 19-ը եվրոպական երկրներ են, 7-ը՝ Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի, 3-ը՝ Ամերիկա մայրցամաքի և 1-ը՝ «Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա» տարածաշրջանի:

Ըստ 2024թ. ՃԶԶԻ-ի կազմված վարկանիշային աղյուսակի՝ առաջատար երկրների եռյակում են՝ ԱՄՆ-ը (5.24 միավոր), Իսպանիան (5.18 միավոր) և Ճապոնիան (5.09 միավոր): Լավագույն տասնյակում են նաև Ֆրանսիան (4-րդ հորիզոնական), Ավստրալիան (5-րդ հորիզոնական), Գերմանիան (6-րդ հորիզոնական), Միացյալ Թագավորությունը (7-րդ հորիզոնական), Չինաստանը (8-րդ հորիզոնական), Իտալիան (9-րդ հորիզոնական) և Շվեյցարիան (10-րդ հորիզոնական):

Հետնապահների եռյակում են Կամերունը (2.99 միավոր, 117-րդ հորիզոնական), Սիեռա Լեոնեն (2.89 միավոր, 118-րդ հորիզոնական) և Մալին (2.78 միավոր, 119-րդ հորիզոնական):

Վարկանիշային աղյուսակի առաջատար 30 երկրների ՃԶ ոլորտի արդյունքը, ավանդաբար պահպանվող առավելությունների շնորհիվ (բարենպաստ գործարար միջավայր, զբոսաշրջությանն աջակցող պետական քաղաքականություն, զարգացած տրանսպորտային, զբոսաշրջային և ՏՀՏ ենթակառուցվածքներ, զբոսաշրջության բնական և մշակութային ռեսուրսներ և այլն), 2022թ. կազմել է համաշխարհային ՀՆԱ-ում այդ ոլորտի արդյունքի ավելի քան 75%-ը, իսկ 2020-2022թթ. ընթացքում այդ ցուցանիշի աճը 70%-ով ապահովվել է նշված 30 երկրների կողմից:

Զարգացող տնտեսություններում ՃԶ ոլորտին նպաստավոր պայմանները շարունակում են բարելավվել, սակայն դրա տեմպերը բավարար չեն առկա բացը լրացնելու համար: Ուշագրավ է, որ 2019 թվականից ի վեր ՃԶԶԻ-ի աճ գրանցած 71 երկրներից 52-ը «ցածրից» մինչև «միջինից բարձր» եկամտով երկրների խմբերից

են: 2019-2024 թվականների ընթացքում ՃԶԶԻ-ի ամենաբարձր աճի տեմպ արձանագրած տասը երկրներից միայն երկուսն են բարձր եկամտով երկրների խմբից՝ Սաուդյան Արաբիան (ՃԶԶԻ աճը 5.7%, վարկանիշային աղյուսակում բարելավումը՝ 9 հորիզոնական) և ԱՄԷ-ն (աճը 4.4%, բարելավումը՝ 7 հորիզոնական): Չնայած ոչ բարձր եկամուտ ունեցող երկրների ՃԶԶԻ-ի՝ նախորդ ժամանակահատվածի համեմատ աճի տեմպը գերազանցում է համաշխարհային միջին աճի տեմպին, այնուամենայնիվ, ինդեքսի՝ համաշխարհային միջին մակարդակից ցածր ցուցանիշ ունեցող երկրների գրեթե 90%-ը հենց այդպիսի երկրներն են:

ՃԶ ոլորտի ռեսուրսները, մասնավորապես բնական և մշակութային արժեքները, զարգացող երկրներին հնարավորություն են տալիս զբոսաշրջության ոլորտը դարձնելու տնտեսական զարգացման «լոկոմոտիվ»:

Առցանց հասանելիության ծավալների աճի, բջջային ցանցի ծածկույթի բարելավման և թվային վճարումների կիրառման էական ավելացման շնորհիվ «ՏՀՏ կիրառելիություն» հիմնասյունի գնահատականի 7.2% աճը վկայում է ՃԶ ոլորտում ծառայությունների թվայնացման մակարդակի աճի մասին:

Ընդհանրապես, Զեկույցում նշվում է, որ դիտարկվող ժամանակահատվածը կարելի է բնորոշել որպես բավական հակասական, քանի որ այդ ժամանակահատվածում մի կողմից՝ արձանագրվել է ՃԶ ոլորտի զգալի աճ, մյուս կողմից՝ ընդգծված կերպով դրսևորվել են այնպիսի մարտահրավերներ, ինչպիսիք են գնաճը, աշխատուժի պակասը, առաջարկի ու պահանջարկի անհավասարակշռվածությունը և անորոշ մակրոտնտեսական ու աշխարհաքաղաքական իրավիճակը:

4. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի 2024թ. ՃԶԶԻ-ն կազմում է 3.73 միավոր, իսկ ըստ ՃԶԶԻ-ի վարկանիշային աղյուսակի՝ Հայաստանը 119 երկրների թվում 72-րդն է: Հայաստանի ՃԶԶԻ-ն 5.9%-ով ցածր է համաշխարհային միջինից (3.96 միավոր)**:**

Ինչպես արդեն նշվել էր, միջժամանակային համադրելիությունն ապահովելու նպատակով 2024-ի զեկույցում զետեղվել են նաև նոր մեթոդաբանությամբ 2019 և 2021 թվականների համար վերահաշվարկված տվյալները: Ըստ այդ տվյալների՝ **2019թ. համեմատ մեր երկրի ՃԶԶԻ-ն նվազել է 2.4%-ով, իսկ վարկանիշային դիրքը վատթարացել է 8 հորիզոնականով:**

Հայաստանի ՃԶԶԻ-ի վերաբերյալ առավել ամբողջական տեղեկատվությունը ներկայացված է Աղյուսակ 2-ում:

Աղյուսակից երևում է, որ 2024-ին Հայաստանի ՃԶԶԻ-ի բոլոր ենթաինդեքսների գծով արձանագրվել է վարկանիշային դիրքի վատթարացում:

«Նպաստող միջավայր» ենթաինդեքսի արժեքը 2019-ի ցուցանիշից 1.6%-ով ավելի է: Չնայած աճին, այս ենթաինդեքսի գծով դիրքը մեկ հորիզոնականով վատթարացել է: Ընդ որում, ենթաինդեքսի մեջ մտնող հինգ հիմնասյուներից չորսի գծով գրանցվել է աճ: Այնուամենայնիվ, նշված չորս հիմնասյուներից երեքի գծով, չնայած գնահատականի աճին, արձանագրվել է վարկանիշային դիրքի վատթարացում: Թե՛ գնահատականի և թե՛ վարկանիշային դիրքի առումով վատթարացում է առկա *«Մարդկային ռեսուրսներ և աշխատանքի շուկա»* հիմնասյան գծով. ընդ որում, դիրքի վատթարացման չափը՝ 13 հորիզոնական, բավական մտահոգիչ է:

Աղյուսակ 2. Հայաստանի ճանապարհորդության և զբոսաշրջության ինդեքսի ենթաինդեքսները և հիմնասյուները 2019 և 2024 թվականներին

ԵՆԹԱԻՆԴԵՔՍ / *Հիմնասյուն*	Արժեք			Դիրք		
	2019	2024	Փոփոխ., %	2019	2024	Փոփոխ., + բարելավում - վատթարացում
ՆՊԱՍՏՈՂ ՄԻՋԱՎԱՅՐ	**4.89**	**4.97**	**1.6**	**49**	**50**	**-1**
Գործարար միջավայր	3.80	3.95	3.9	74	70	4
Ապահովություն և անվտանգություն	5.57	5.62	0.9	62	64	-2
Առողջություն և հիգիենա	5.81	5.82	0.2	26	31	-5
Մարդկային ռեսուրսներ և աշխատանքի շուկա	4.48	4.44	-0.9	32	45	-13
ՏՀՏ կիրառելիություն	4.82	5.04	4.6	57	62	-5
ՃՋ ՈԼՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՍՏՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐ	**4.93**	**4.56**	**-7.5**	**13**	**39**	**-26**
ՃՋ ոլորտի առաջնայնություն	4.65	4.77	2.6	65	44	21
ՃՋ ոլորտի բացություն	4.03	3.33	-17.4	59	87	-28
Գնային մրցունակություն	6.12	5.58	-8.8	7	22	-15
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**2.74**	**2.72**	**-0.7**	**82**	**84**	**-2**
Օդային փրանսպորտի ենթակառուցվածք	3.02	3.05	1.0	78	75	3
Վերգետնյա և ծովային փրանսպորտի ենթակառուցվածք	2.87	2.81	-2.1	83	94	-11
Զբոսաշրջային ծառայություններ և ենթակառուցվածք	2.34	2.31	-1.3	79	77	2
ՃՋ ՈԼՈՐՏԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	**1.37**	**1.46**	**6.3**	**111**	**112**	**-1**
Բնական ռեսուրսներ	1.44	1.48	2.8	110	110	0
Մշակութային ռեսուրսներ	1.42	1.50	5.6	86	86	0
Ոչ ժամանցային ռեսուրսներ	1.26	1.39	10.3	105	94	11
ՃՋ ՈԼՈՐՏԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ	**4.45**	**4.12**	**-7.5**	**19**	**68**	**-49**
Միջավայրային կայունություն	4.03	3.90	-3.2	71	91	-20
ՃՋ ոլորտի սոցիալ-տնտեսական ազդեցություն	4.69	3.81	-18.8	31	89	-58
ՃՋ ոլորտի պահանջարկի կայունություն	4.64	4.65	0.2	15	10	5

«ՃՋ ոլորտի քաղաքականություն և նպաստող պայմաններ» ենթաինդեքսի գծով արձանագրվել է թե՛ գնահատականի և թե՛ դիրքի շոշափելի վատթարացում՝ համապատասխանաբար 7.5% և 26 հորիզոնական: Ի դեպ, բացասական տեղաշարժ է արձանագրվել նաև այս ենթաինդեքսի մեջ ներառված «Գնային մրցունակություն» հիմնասյան գծով: Մասնավորապես, 2019թ. համեմատ այս հիմնասյան գնահատականը նվազել է 8.8%-ով, իսկ դիրքը վատթարացել է միանգամից 15 հորիզոնականով: Այս վատթարացումը վկայում է այն մասին, որ միջազգային զբոսաշրջության առումով նվազել է Հայաստանի գրավչությունը: Գնային մրցունակության նվազումը նաև

պայմանավորված է դրամի էական արժևորմամբ (01.01.2019թ.-01.01.2024թ. ժամանակահատվածում դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ շուրջ 20 տոկոսով արժևորվել է):

«ՃԶ ոլորտի կայունություն» ենթաինդեքսի գծով ևս առկա է վատթարացում՝ գնահատականի 7.5%-ով անկում և դիրքի 49 հորիզոնականով նահանջ, ինչը խոր մտահոգության տեղիք է տալիս: Ընդ որում, ինդեքսի բոլոր 17 հիմնասյուներից ամենամեծ վատթարացումն արձանագրվել է հենց այս ենթաինդեքսում ներառված *«ՃԶ ոլորտի սոցիալ-տնտեսական ազդեցություն»* հիմնասյան գծով: Այս հիմնասյան գնահատականը նվազել է 18.8%-ով, իսկ դիրքը վատթարացել է միանգամից 58 հորիզոնականով: Մինչդեռ, այս հիմնասյունն արտահայտում է երկրի տնտեսության վրա ՃԶ ոլորտի ազդեցության ուժգնությունը: Այսինքն՝ ստացվում է, որ ՀՀ տնտեսական աճի վրա ՃԶ ոլորտի աճի ազդեցությունն էապես թուլացել է:

Զափազանց անհանգստացնող է այն, որ «ՃԶ ոլորտի ռեսուրսներ» ենթաինդեքսի առումով ևս վիճակը ծայրաստիճան անմխիթար է: Մասնավորապես, այս ենթաինդեքսի գծով Հայաստանը հետնապահների թվում է՝ գնահատականն ընդամենը 1.46 է՝ զբաղեցնելով անպատվաբեր 112-րդ հորիզոնականը:

Առաջին հայացքից պարադոքսալ կարող է թվալ այն հանգամանքը, որ, չնայած Հայաստանի ՃԶՀԻ-ի՝ 2019թ. համեմատ 2024թ. նվազմանը, 2018-2023թթ. ժամանակահատվածում[4] Հայաստան այցելուների թիվը 40.2%-ով աճել է (1.65 մլն-ից մինչև 2.32 մլն)[5]: Իրականում սա ևս մեկ անգամ ապացուցում է, որ այս աճը ոչ թե ՃԶ ոլորտի զարգացման և իրականացվող բարենպաստ քաղաքականության արդյունք է, այլ պարզապես պայմանավորված է արտաքին (ժամանակավոր) հանգամանքներով, մասնավորապես՝ ռուս-ուկրաինական ռազմական հակամարտության հետևանքով մարդկանց մեծ ներհոսքով, ինչպես նաև ՌԴ նկատմամբ սահմանափակումների պատճառով այդ երկրի քաղաքացիների զբոսաշրջային նախասիրությունների հարկադրված փոփոխությամբ: Պատահական չէ, որ 2021թ. զբոսաշրջիկների թիվը կազմել է ընդամենը 876 հազար մարդ, 2022-ին արդեն 1.67 մլն մարդ, իսկ 2023-ին այդ թիվը հասել է 2.32 մլն-ի[5]:

[4] Դիտարկվել է 2018-2023թթ. ժամանակահատվածը, քանի որ ընթացիկ տարվա ՃԶՀԻ-ն հաշվարկվում է նախորդ տարվա տվյալների հիման վրա:
[5] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե՝ https://armstat.am/file/doc/99539343.xls (այցելվել է 04.06.2024թ.):

5. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԴՐՈՒՄՆԵՐ

Համաշխարհային տնտեսական համաժողովի դասակարգմամբ Հայաստանը ներառված է «Եվրոպա և Եվրասիա» տարածաշրջանի «Եվրասիա» ենթատարածաշրջանում: Այս բաժնում ներկայացված է Հայաստանի տարածաշրջանային, ինչպես նաև սահմանակից երկրների հետ համեմատական վերլուծությունը:

Հայաստանի 2024թ. ՃԶԶԻ-ն զգալիորեն զիջում է «Եվրոպա և Եվրասիա» տարածաշրջանի միջինին՝ 4.26 միավորին:

«Եվրոպա և Եվրասիա» տարածաշրջանի «Եվրասիա» ենթատարածաշրջանի յոթ երկիր ներառող վարկանիշային աղյուսակում Հայաստանը զբաղեցնում է չորրորդ հորիզոնականը՝ զգալիորեն հետ մնալով Վրաստանից (27 հորիզոնականով), Ղազախստանից (20 հորիզոնականով) և Ադրբեջանից (16 հորիզոնականով):

Աղյուսակ 3. «Եվրասիա» ենթատարածաշրջանի երկրների ՃԶԶ ինդեքսը 2019 և 2024 թվականներին

Երկիր	2019 թվական		2024 թվական	
	Ինդեքս	Դիրք	Ինդեքս	Դիրք
Վրաստան	4.10	49	4.14	45
Ղազախստան	3.92	58	4.07	52
Ադրբեջան	4.00	51	3.98	56
Հայաստան	***3.82***	***64***	***3.73***	***72***
Ուզբեկստան	3.41	94	3.68	78
Տաջիկստան	3.40	96	3.42	99
Ղրղզստան	3.29	103	3.38	102

Անցումային երկրների ՃԶԶԻ-ները և դրա բաղադրիչները ներկայացված են Հավելվածում:

Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ՝ Զեկույցում ներառված երկրներից[6] ՃԶԶԻ-ով և զբաղեցրած դիրքով Հայաստանը զիջում է

[6] ՌԴ-ն և Բելառուսը Զեկույցում ներառված չեն:

Ղազախստանին և գերազանցում Ղրղզստանին: **Ընդ որում, այդ երկու երկրներում էլ, ի տարբերություն Հայաստանի, 2019թ. համեմատ առկա է բարելավում՝ թե՛ ինդեքսի և թե՛ վարկանիշային դիրքի առումով:**

Աղյուսակ 3-ում ներկայացված են ՃԶԶԻ-ն և դրա ենթաինդեքսները Հայաստանում և սահմանակից երկրներում:

Աղյուսակ 4. Ճանապարհորդության և զբոսաշրջության զարգացման ինդեքսը և դրա ենթաինդեքսները Հայաստանում և հարևան երկրներում, 2024թ.

Ցուցանիշ / Երկիր		Հայաստան	Վրաստան	Ադրբեջան	Թուրքիա	Իրան
ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՆԴԵՔՍ	Արժեք	3.73	4.14	3.98	4.39	3.72
	Դիրք	72	45	56	29	73
Նպաստող միջավայր	Արժեք	4.97	5.39	4.96	4.43	4.02
	Դիրք	50	38	53	72	95
ՃԶ ոլորտի քաղաքականություն և նպաստող պայմաններ	Արժեք	4.56	4.88	4.68	5.16	4.33
	Դիրք	39	13	26	1	60
Ենթակառուցվածք և ծառայություններ	Արժեք	2.72	3.60	3.42	4.21	2.91
	Դիրք	84	50	55	31	77
ՃԶ ոլորտի ռեսուրսներ	Արժեք	1.46	1.81	1.95	4.23	3.13
	Դիրք	112	86	69	14	29
ՃԶ ոլորտի կայունություն	Արժեք	4.12	4.18	4.22	3.87	3.99
	Դիրք	68	61	56	99	87

2024թ. ՃԶԶԻ-ով և վարկանիշային դիրքով Հայաստանը զգալիորեն զիջում է հարևան չորս երկրներից երեքին՝ Թուրքիային, Վրաստանին և Ադրբեջանին, իսկ Իրանին շատ աննշան է գերազանցում (Հայաստանը և Իրանը վարկանիշային աղյուսակում ևս հարևաններ են): **Ընդ որում, այս երկրների ցանկում ևս 2019թ. համեմատ վատթարացել է միայն Հայաստանի վարկանիշային դիրքը:**

Երկու ենթաինդեքսների գծով Հայաստանը զիջում է **բոլոր** հարևաններին: **Դրանցից առաջինը՝ «Ենթակառուցվածք և ծառայություններ» ենթաինդեքսը, վկայում է, որ անբավարար մակարդակում են գտնվում տրանսպորտի ծառայությունները (օդային, երկաթուղային և ավտոմոբիլային), ճանապարհների որակը և խտությունը, կացության ծառայությունները և այլն: Երկրորդի՝ «ՃԶ ոլորտի ռեսուրսներ» ենթաինդեքսի ցածր լինելն առավել մտահոգիչ է, քանի որ փաստում է, որ Հայաստանը գրավիչ չէ բնության գեղատեսիլ վայրերի, կենդանական ու բուսական բազմազանության և մշակութային ժառանգության առումով: Դա նշանակում է, որ պատկան**

մարմիններն անարդյունավետ են աշխատում տարբեր միջազգային կառույցներին, խոշոր համաշխարհային զբոսաշրջային գործակալություններին և պոտենցիալ զբոսաշրջիկներին Հայաստանի իրական պատկերը հասանելի դարձնելու ուղղությամբ: Մինչդեռ հարևան երկրները, որոնք այս ենթաինդեքսի համար հաշվի առնվող գործոնների առումով, ըստ էության, փաստացի չեն գերազանցում Հայաստանին, ունեն ավելի բարձր միավորներ:

6. ԱՄՓՈՓՈՒՄ

• 2024թ. ճանապարհորդության և զբոսաշրջության զարգացման 3.73 ինդեքսով Հայաստանը 119 երկրների շարքում 72-րդն է: **2019թ. համեմատ մեր երկրի ինդեքսը նվազել է 2.4%-ով, իսկ վարկանիշային դիրքի առումով արձանագրվել է հետընթաց՝ 8 հորիզոնականով:**

• Հայաստանի ինդեքսը 5.9%-ով պակաս է համաշխարհային միջին (3.96 միավոր) և 12.4%-ով մեր տարածաշրջանային խմբի՝ «Եվրոպա և Եվրասիա» տարածաշրջանի տարածաշրջանային միջին (4.26 միավոր) ցուցանիշից:

• **Ճանապարհորդության և զբոսաշրջության զարգացման ինդեքսի բոլոր ենթաինդեքսների գծով 2024-ին արձանագրվել է Հայաստանի վարկանիշային դիրքի վատթարացում:**

• **«Ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի քաղաքականություն և նպաստող պայմաններ» ենթաինդեքսի գծով շոշափելի վատթարացում է արձանագրվել ՀՀ-ի թե՛ գնահատականի և թե՛ վարկանիշային դիրքի առումով:** Հատկապես մտահոգիչ են այս ենթաինդեքսի մեջ ներառված «Գնային մրցունակություն» հիմնական գծով արձանագրված բացասական փոփոխությունները (այս հիմնական գնահատականը 2019թ. համեմատ նվազել է 8.8%-ով, իսկ դիրքը վատթարացել է 15 հորիզոնականով), **քանի որ դրանք վկայում են միջազգային զբոսաշրջության առումով Հայաստանի գրավչության կտրուկ նվազման մասին:** Գնային մրցունակության նվազմանը, անկասկած, նպաստել է նաև դրամի արժևորումը:

• **Վատթարացումը զգալի է նաև «Ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի կայունություն» ենթաինդեքսի գծով՝ գնահատականի 7.5%-ով անկում և դիրքի 49 հորիզոնականով նահանջ: Հատկանշական է, որ ինդեքսի բոլոր 17 հիմնասյուներից ամենամեծ վատթարացումն արձանագրվել է հենց այս ենթաինդեքսում ներառված *«Ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի սոցիալ-տնտեսական ազդեցություն»* հիմնական**

գծով. հիմնական գնահատականը նվազել է 18.8%-ով, իսկ դիրքը վատթարացել է միանգամից 58 հորիզոնականով: Այս հիմնական գծով վատթարացումը խիստ մտահոգիչ է այն պատճառով, որ դրանով «չափվում» է երկրի տնտեսության վրա ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի ազդեցության ուժեղությունը: **Փաստորեն, ստացվում է, որ ՀՀ տնտեսական աճի վրա ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի աճի ազդեցությունն էապես թուլացել է:**

• Չնայած Հայաստանի ճանապարհորդության և զբոսաշրջության զարգացման ինդեքսը 2019թ. համեմատ 2024թ. նվազել է, 2018-2023թթ. ժամանակահատվածում Հայաստան այցելուների թիվն աճել է՝ 40.2%-ով (1.65 մլն-ից մինչև 2.32 մլն): **Իրականում, սա հաստատում է այն պնդումը, որ այս աճը չի կարելի ներկայացնել որպես ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի զարգացման և իրականացվող բարենպաստ քաղաքականության արդյունք, այլ այն պարզապես արտածին (ժամանակավոր) գործոնների ազդեցության հետևանք է և, մասնավորապես, պայմանավորված է ռուս-ուկրաինական ռազմական հակամարտության հետևանքով արտերկրից մարդկանց մեծ ներհոսքով, ինչպես նաև ՌԴ նկատմամբ պատժամիջոցների կիրառման պատճառով այդ երկրի քաղաքացիների զբոսաշրջային ուղղությունների հարկադրված փոփոխությամբ:**

• **2024թ. ճանապարհորդության և զբոսաշրջության զարգացման ինդեքսով և վարկանիշային դիրքով Հայաստանը զգալիորեն զիջում է հարևան չորս երկրներից երեքին**՝ Թուրքիային, Վրաստանին և Ադրբեջանին (իսկ Իրանին շատ աննշան է գերազանցում): **Ավելին, 2019թ. համեմատ տարածաշրջանում միայն Հայաստանն է ունեցել վարկանիշային դիրքի նահանջ:**

• Ինդեքսի հինգ ենթաինդեքսներից երկուսի գծով Հայաստանը զիջում է **բոլոր** հարևաններին:

«Ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի ռեսուրսներ» ենթաինդեքսի ցածր լինելը չափազանց մտահոգիչ է: Նախ այն պատճառով, որ այս ենթաինդեքսի գծով Հայաստանը վարկանիշային աղյուսակում հետնապահների թվում է՝ գնահատականն ընդամենը 1.46 է՝ զբաղեցնելով վերջից 8-րդ հորիզոնականը: Մտահոգության մյուս պատճառն այն է, որ այսպիսի ցածր գնահատականից հետևում է որ Հայաստանը բնության գեղատեսիլ վայրերի, կենդանական ու բուսական բազմազանության և մշակութային ժառանգության առումով գրավիչ երկիր չէ, **իսկ դա վկայում է տարբեր միջազգային կառույցներին, շահագրգիռ կողմերին և պոտենցիալ զբոսաշրջիկներին Հայաստանի իրական պատկերը ներկայացնելու ուղղությամբ պատկան մարմինների անարդյունավետ աշխատանքի մասին:** Այս պնդման օգտին է

խոսում այն հանգամանքը, որ մեր հարևան երկրների (որոնք այս ենթաինդեքսի համար հաշվի առնվող գործոնների առումով, ըստ էության, Հայաստանից ավելի շահեկան պայմաններ չունեն) գնահատականները շատ ավելի բարձր են:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՃԶԶԻ-ն և դրա բաղադրիչները նախկին ԽՍՀՄ և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրներում

N	ԵՐԿԻՐ	ՃԶԶԻ				ԵՆԹԱԻՆԴԵՔՍՆԵՐ																			
						ՆՊԱՍՏՈՂ ՄԻՋԱՎԱՅՐ				ՃԶ ՈԼՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՍՏՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐ				ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ				ՃԶ ՈԼՈՐՏԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ				ՃԶ ՈԼՈՐՏԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ			
		ԱՐԺԵՔ		ԴԻՐՔ		ԱՐԺԵՔ		ԴԻՐՔ		ԱՐԺԵՔ		ԴԻՐՔ		ԱՐԺԵՔ		ԴԻՐՔ		ԱՐԺԵՔ		ԴԻՐՔ		ԱՐԺԵՔ		ԴԻՐՔ	
		Միավոր	Փոփոխություն	Հորիզոնական	Փոփոխություն	Միավոր	Փոփոխություն	Հորիզոնական	Փոփոխություն	Միավոր	Փոփոխություն	Հորիզոնական	Փոփոխություն	Միավոր	Փոփոխություն	Հորիզոնական	Փոփոխություն	Միավոր	Փոփոխություն	Հորիզոնական	Փոփոխություն	Միավոր	Փոփոխություն	Հորիզոնական	Փոփոխություն
1	Լեհաստան	4.40	2.0%	27	3	5.41	3.4%	36	-3	4.88	-1.8%	12	-1	3.78	-3.8%	40	0	3.25	10.3%	24	6	4.04	3.1%	81	9
2	Հունգարիա	4.27	1.7%	37	5	5.49	5.7%	30	5	4.92	-2.9%	9	-5	3.78	-2.8%	41	3	2.25	2.2%	58	0	4.10	3.0%	72	9
3	Բուլղարիա	4.25	0.0%	40	-1	5.40	4.4%	37	-1	4.82	-4.6%	17	-12	3.48	-5.1%	53	-2	2.25	-0.7%	57	-1	4.50	1.2%	22	-1
4	Սլովենիա	4.22	-1.2%	42	-9	5.53	2.4%	28	-1	4.95	0.8%	8	8	3.95	-4.3%	37	1	1.89	4.0%	79	-1	3.90	-10.0%	96	-64
5	Ռումինիա	4.19	0.8%	43	2	5.15	2.2%	45	-5	4.55	-6.4%	42	-20	3.77	-1.6%	42	3	2.30	5.8%	56	3	4.54	5.7%	17	20
6	Վրաստան	4.14	1.0%	45	4	5.39	5.2%	38	-1	4.88	-3.3%	13	-7	3.60	1.7%	50	4	1.81	3.1%	86	0	4.18	-3.8%	61	-32
7	Խորվաթիա	4.13	-0.7%	46	-2	5.27	3.8%	41	-3	4.16	-4.1%	80	-3	4.23	-6.6%	29	-2	2.48	-1.2%	49	-4	3.76	0.4%	103	1
8	Ղազախստան	4.07	3.7%	52	6	5.09	3.2%	47	-1	4.53	1.0%	43	23	3.05	-2.5%	70	0	2.64	12.5%	44	11	4.33	7.2%	40	28
9	Սլովակիա	4.00	-0.2%	54	-2	5.45	1.9%	31	-2	4.51	-2.2%	44	5	3.12	-5.6%	68	-9	1.95	4.3%	70	5	3.99	-0.1%	88	-12
10	Ադրբեջան	3.98	-0.6%	56	-5	4.96	-0.3%	53	-10	4.68	-4.4%	26	-8	3.42	-2.6%	55	0	1.95	16.5%	69	24	4.22	-2.0%	56	-21
11	Մոնտենեգրո	3.96	0.9%	60	-1	4.88	-0.9%	57	-9	4.38	-4.0%	58	-2	4.14	-3.4%	33	0	1.38	4.5%	114	0	4.38	13.7%	37	58
12	Ալբանիա	3.87	5.9%	66	12	4.97	7.4%	49	10	4.91	7.2%	10	44	3.19	13.1%	64	16	1.66	10.2%	99	7	3.87	-4.9%	98	-34
13	Սերբիա	3.86	2.7%	68	3	5.24	5.1%	44	-3	4.39	-3.5%	56	4	3.12	2.0%	67	5	1.67	7.0%	97	3	3.93	3.5%	93	9
14	*Հայաստան*	*3.73*	*-2.4%*	*72*	*-8*	*4.97*	*1.6%*	*50*	*-1*	*4.56*	*7.5%*	*39*	*-26*	*2.72*	*-0.7%*	*84*	*-2*	*1.46*	*6.3%*	*102*	*-1*	*4.12*	*-7.5%*	*68*	*-49*
15	Ուզբեկստան	3.68	7.8%	78	16	4.92	3.5%	55	1	4.06	32.2%	89	30	2.64	1.9%	87	3	1.92	15.4%	73	23	4.00	-1.5%	85	-20
16	Հյուսիսային Մակեդոնիա	3.53	-1.9%	87	-5	4.79	1.4%	61	-4	4.17	-6.5%	76	-8	2.61	-3.6%	90	-3	1.54	4.9%	108	0	3.69	-4.6%	108	-15
17	Մոլդովա	3.53	1.0%	88	1	4.88	8.8%	58	8	4.15	-5.8%	84	-11	2.40	-2.3%	97	-3	1.28	8.0%	118	0	4.02	-5.7%	82	-39
18	Բոսնիա և Հերցեգովինա	3.51	1.1%	90	1	4.58	5.5%	67	3	4.18	-8.1%	75	-17	2.65	4.3%	86	6	1.55	14.5%	107	6	3.85	-3.0%	100	-15
19	Տաջիկստան	3.42	0.7%	99	-3	4.29	-1.0%	76	-5	3.92	-1.2%	101	1	2.32	2.4%	103	-2	1.65	9.5%	101	4	4.35	1.4%	39	-1
20	Ղրղզստան	3.38	2.8%	102	1	4.52	6.5%	69	4	4.17	0.2%	78	17	2.00	1.1%	114	-1	1.64	7.6%	102	2	3.79	-2.3%	102	-10

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: